ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

1908թ. Օսմանյան կայսրությունում Աբդուլ-Համիդի բռնակալության տապալման և երիտթուրքերի՝ իշխանության գլուխ անցնելու արդյունքում չիրականացան արևմտահայերի՝ անձի, պատվի, գույքի անձեռնամխելիության ու ոտնահարված իրավունքների վերականգման հույսերը: Ընդհակառակը, երիտթուրքերը հայերի նկատմամբ վարեցին ավելի դաժան ու բիրտ քաղաքականություն՝ վերջնական նպատակ ունենալով ազգի ֆիզիկական ոչնչացումը: Սա բնականաբար առաջ բերեց արևմտահայության հակազդեցությունն ու դրդեց նրան ուղիներ որոնելու իր անտանելի վիճակը բարվոքելու համար: Այս իմաստով 1912թ. 1-ին Բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտությունն որոշակի հույսեր ներշնչեց հայ քաղաքական շրջանակներին և նպաստավոր պայմաններ ստեղծեց նորից դիմելու մեծ տերություններին՝ հայկական չարաբաստիկ հարցը բարձրացնելու խնդրանքով:

Արևմտահայերի ծանր կացության վերաբերյալ Կ. Պոլսի Պատրիարքարանից ստացված տեղեկագրերի, աշխարհի տարբեր մասերում գտնվող հայերի խնդրագրերի հիման վրա Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը 1912թ. հոկտեմբերի 2-ին իր պատվիրակ՝ Վրաստանի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի միջոցով դիմում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին՝ խնդրելով միջնորդելու կայսր Նիկոլայ 2-ի մոտ «Ռուսաստանի հզոր հովանավորության տակ առնելու Թուրքահայաստանի բազմաչարչար ժողովուրդին»[1]:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 6:

Դրական արձագանքելով հանդերձ՝ ռուսական կառավարությունը, հաշվի առնելով առկա իրավիճակն ու հայկական հարցի միջազգային բնույթը, չէր կարող առանց մյուս մեծ տերությունների հետ համաձայնեցնելու, միայնակ քայլեր ձեռնարկել Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Այդ իսկ պատճառով Պետերբուրգում հայերին խորհուրդ են տալիս դիմել նաև մյուս տերություններին, ինչպես նաև պատգամավորություն ունենալ այն կոնֆերանսում, որը պետք է գումարվեր Բալկանյան խնդիրները լուծելու համար[2]: Այս իրողությունը քաջ գիտակցում էին նաև հայ քաղաքական շրջանակներում և այդ իսկ պատճառով Գևորգ Ե կաթողիկոսն իր 1912թ. նոյեմբերի 10-ի N1482 կոնդակով եգիտպահայ ականավոր հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշային նշանակում է իր ներկայացուցիչն Եվրոպայում և խնդրում «յանձն առնել երթալ ի վեհաժողով եւ առաջի առնել պատգամաւորաց եւրոպական պետութեանց զխնդիր Հայոց, հայցելով զմիջնորդութիւն նոցա առ ողբալի կացութեան հայ ժողովրդեան Տաճկաստանի»[3]: Այս կոնդակով հիմք է դրվում Պողոս Նուբարի գլխավորությամբ Ազգային Պատվիրակության ձևավորմանը, որի անդամներ հետագայում նշանակվում են Յաղուբ Արթին փաշան, Հարություն Մաստիչյանը, Գևորգ Ութուջյանը և Մինաս Չերազը:

Պողոս Նուբարին հանձնված առաքելությունը՝ մեծ տերություններից պահանջել բարենորոգումների իրագործումն Արևմտյան Հայաստանում, շատ դժվար և պատասխանատու էր: Նա պետք է գործեր եվրոպական տարբեր պետությունների մայրաքաղաքներում, պետություններ, որոնք բաժանված էին երկու հակամարտ խմբավորումների (Անտանտ և Եռյակ Միություն), որոնցից յուրաքանչյուրն Օսմանյան կայսրության այդ հատվածում ուներ իր շահերն ու հետաքրքրությունները և աշխատում էր ուժեղացնել իր ազդեցությունը:

Ամենայն Հայոց կաթողիկոսը, ինչպես նաև հայ ժողովրդի մեծագույն մասն արևմտահայության փրկության միակ հույսը կապում էին Ռուսաստանի հետ և բարենորոգումներ իրականացնելու նախաձեռնությունը վերապահում

---

[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 6:

[3] Օտեան Ե., Պողոս Փաշա Նուպար (կենսագրական նօթեր), Կ. Պոլիս, 1913, էջ 46- 47:

նրան: Կ.Պոլսի ռուսական դեսպան Մ. Գիրսն արտգործնախարար Ս.Սազոնովին ուղղած 1912 թ.-ի նոյեմբերի 26-ի նամակում գրում էր. «Վանի, Բայազետի, Էրզրումի, Տրապիզոնի, Բիթլիսի մեր հյուպատոսները միածայն վկայում են,որ այժմ բոլոր հայերը, առանց կուսակցական տարբերությունների Ռուսաստանի կողմն են»: Նա միաժամանակ նշում էր,որ հայկական հարցը Ռուսաստանի համար ունի «առաջնակարգ պետական կարևորություն»[4]:

Միանգամայն պարզ է, որ Ռուսաստանի շահագրգռվածությունը հայկական հարցում պայմանավորված էր ոչ այնքան արևմտահայերի վիճակի բարելավմամբ, որքան իր սեփական շահերով, որոնք, այդ պահին համընկնում էին հայ ժողովրդի շահերի հետ: Արևմտահայ քաղաքական գործիչ Վ. Փափազյանն իր հուշերում գրում էր. «Ռուսաստանը իրապես շահագրգռված է մեր երկրամասով: Թեև չէինք անգիտանար, որ այդ շահագրգռվածությունը սեփական հաշվոյն էր, սակայն կը գերադասեինք այդ վայրկյանին օգտագործել բոլոր ուժերը միայն Թուրքիայէն մեր անիծեալ ճակատագիրն անջատելու համար»[5]:

Պողոս Նուբարը ևս քաջ գիտակցում էր, որ միայն Ռուսաստանի որպես ամենաշահագրգիռ տերության, օգնությամբ կարելի է հասնել դրական արդյունքի: Այդ մասին կաթողիկոսին հղած 1913թ. փետրվարի 10-ի նամակում նա գրում էր. «Պատվիրակությունն այն կարծիքն ունի, որ ամեն բանից առաջ պետք է Ռուսաստանի վրա հույս դնենք բարենորոգումների իրագործման համար»[6]: Հենց այդ նկատառումով էլ նա պատրաստակամություն է հայտնում հետևել ռուսական կառավարության կարգադրություններին և ամենուրեք հարաբերությունների մեջ գտնվել ռուս դեսպանների հետ, որպեսզի նրանք համոզված լինեն, որ հայերի ջանքերն ու դիվանագիտական դիմումներն երբեք հակառակ չեն ռուսական շահերին: Նա հետ է կանգնում նաև Լոնդոնի խաղաղության կոնֆերանսին դիմելուց, քանի որ Ռուսաստանը հայերի շահերին անհամապատասխան էր համարում հայկական հարցը կոնֆերանսի

---

[4] Сборник дипломатических документов. Реформы в Армении 26 ноября 1912 г. — 10 мая 1914 г., Петроград, 1915, с. 4.

[5] Փափազյան Վ., Հայկական բարենորոգումները (1912-1914), «Վէմ», Փարիզ. N 1, 1933, էջ 96:

[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 27:

օրակարգ մտցնելը՝ հաշվի առնելով այդ խնդրում տերությունների եղած հակասությունները: Սրանով ռուսական կառավարությունը հասկացնել էր տալիս, որ տվյալ պահին հայկական հարցի վերաբերյալ որևէ դիմում տերություններին հղելը նպատակահարմար չէ, և որ այդ խնդրում նախաձեռնությունը պետք է պատկանի իրեն: Վորոնցով-Դաշկովը Նիկոլայ 2-ին հղած 1912թ. նոյեմբերի 28-ի նամակում ընդգծում է, որ «եթե այդ նախաձեռնությունն առաջանա մեկ այլ պետության կողմից, ապա դրանով անուղղելի վնաս կհասցրվի Ռուսաստանի հեղինակությանը փոքրասիական քրիստոնյաների միջև»[7]:

Նման պայմաններում Պողոս Նուբարին մնում էր միայն ամեն կերպ աշխատել եվրոպական կառավարող և ազդեցիկ անձանց և շրջանակների կարծիքներն ու տրամադրությունները նախապատրաստել բարենորոգումներ մտցնելու օգտին, ինչպես նաև եվրոպական ազդեցիկ թերթերին ուղարկած հոդվածների ու նյութերի, տարբեր երկրների կառավարություններին արված անմիջական դիմումների միջոցով հայկական հարցին ի նպաստ տրամադրել պաշտոնական անձանց:

Որքան էլ Պողոս Նուբարը կարևորություն տար Ռուսաստանի նախաձեռնությանը և փափագեր բարենորոգումներ կամ նույնիսկ ինքնավարություն նրա վերահսկողության տակ, նա չէր կարող պաշտոնապես հանդես գալ նման դիրքերից: Նրան առաքելություն էր վերապահված աշխատելու եվրոպական երկրներում, երկրներ, որոնք շատ անբարեացակամ և կասկածանքով էին նայում Արևմտյան Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի կատարած յուրաքանչյուր ձեռնարկին: Պողոս Նուբարի նման դիրքորոշումն ոչ միայն անիմաստ կդարձներ Ազգային Պատվիրակության գործունեությունը, այլև կվնասեր հայկական դատի լուծմանը: Ուստի նրան հարկավոր էր այնպես վարել իր պաշտոնը, որ մի կողմից չհարուցեր տերությունների (հատկապես Գերմանիայի) կասկածը, թե նա հանդես է գալիս հայկական վիլայեթներում Ռուսաստանի ազդեցության ուժեղացման դիրքերից, իսկ մյուս կողմից չհարուցեր Ռուսաստանի կասկածները: Այս առումով, հաշվի առնելով

---

[7] АВПР, ф.Политархив, г.1912, д. 3459, л. 57.

Գերմանիայի ընդդիմությունը հայկական պահանջներին, հատկանշական են Պողոս Նուբարի պարբերաբար այցերը Բեռլին: Այստեղ, հանդիպելով արտգործնախարարի օգնական Ա. Ցիմմերմանի և այլ պաշտոնատար անձանց հետ, նա ամեն ինչ արեց ցույց տալու բարենորոգումների կարևորությունն ու չափավորությունը, ինչպես նաև փարատելու այն կասկածները, թե, իբր, հայերը ծառայում են Ռուսաստանի նվաճողական ձգտումներին: «Բեռլինում, - գրում է նա կաթողիկոսին, - ստիպված էի Ռուսաստանի նկատմամբ վերապահ դիրքս չափազանցեցնել՝ անվստահությունը մեղմացնելու համար» [8]:

Սրա հետ մեկտեղ Ազգային Պատվիրակությունն իր գործունեության ընթացքում պետք է զգուշավոր մոտեցում ցուցաբերեր՝ փորձելով չդիպչել Թուրքիայի շահերին և ինքնասիրությանը:

Ի պատիվ Պողոս Նուբար փաշայի, պետք է ասել, որ այնպիսի մի խճճված հարցում, ինչպիսին հայկականն էր, ուր բախվում էին մեծ տերությունների շահերը, նա հմտորեն վարեց ստանձնած պաշտոնը՝ չհարուցելով ոչ Ռուսաստանի և ոչ էլ մյուս տերությունների կասկածները՝ մեկի կամ մյուսի շահերին ծառայելու մեջ, ինչպես նաև լոյալ մնաց Թուրքիայի հանդեպ և հանդես չեկավ ոչ մի հակաթուրքական հայտարարությամբ կամ քայլով:

Ստեղծված բարենպաստ պայմաններում, երբ հնարավորություն էր ընձեռնվել հայկական հարցի լուծման խնդրանքներով դիմել տերությունների օժանդակությանը, հայ ղեկավար շրջանակներին՝ գործի հաջողության համար, անհրաժեշտ էր ճիշտ կողմնորոշվել և ունենալ պահանջների մեկ հստակ ծրագիր: Պատմական տվյալ ժամանակաշրջանում միայն բարենորոգումների իրականացման պահանջներն էին, որոնք հնարավոր էր, որ իրականանային: Ավելին պահանջելով՝ հայերը դժվար թե հասնեին որևէ շոշափելի արդյունքի: «Մեկ բան պարզ էր բոլորի համար,- գրում էր Վ.Փափազյանը,- թէ ցանկալի չէ եւ ոչ էլ հնարաւոր բարենորոգումները վերածելու անկախութեան պահանջի:

---

[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 20:

Յեղափոխական-քաղաքական կուսակցութիւններն իսկ չէին խորհեր այդ մասին»[9]:

Նման կարծիքն ամբողջովին կիսում էր նաև Ազգային Պատվիրակության նախագահ Պ.Նուբարը: Նա հատկապես ելնում էր առկա քաղաքական իրավիճակից ու տերությունների ունեցած դիրքից, որոնք Օսմանյան կայսրությունում ունենալով հսկայական շահեր, չէին պաշտպանի հայերի արմատական պահանջները, որոնք այս կամ այն կերպ կարող էին խախտել նրա տարածքային ամբողջականությունը: Ճիշտ էր ազգային երեսփոխաններից մեկը նկատելով, որ «Եվրոպայից ոչ թագավարություն, ոչ էլ ինքնավարություն կարող եք ստանալ: Եթե Թուրքիան էլ ինքը հավանի հայերին ինքնավարություն տալը, Անատոլիայի արևելյան մասի վրա աչք ունեցող տերություններն իրենց բոլոր ուժերով կհակառակեն դրան»[10]: Բացի այդ չպետք է անտեսվեր նաև թուրքական իշխանությունների կատաղի ընդդիմությունը, որոնք, հատկապես երկրի եվրոպական տիրույթների կորուստից հետո, ամեն կերպ ջանում էին ամրապնդել իրենց տիրապետությունը կայսրության արևելյան շրջաններում:

Այս հանգամանքները հաշվի առնելով էր, որ Պ.Նուբարն եկավ այն համոզման, որ տվյալ պայմաններում տերություններին պետք է ներկայացնել միայն բարենորոգումների իրականացման պահանջներ, որոնք համապատասխանում էին նրանց շահերին: «Հայ պատգամաւորութեան նախագահը,- գրում էր «Կոչնակ» թերթը,- հայերուս կողմը գտնուած ուժերն և համակրութիւնները կշռելով՝ անոնց համապատասխան ակնկալութիւներ կը տածէ, պահանջներ կը բանաձեւէ եւ կը հաշւէ թէ մեր իրաւունքներուն որքանը կարելի է հիմա ձեռք բերել ուստի և պահանջել»[11]: Այդ իսկ պատճառով Պ.Նուբարն իր ունեցած հանդիպումների ընթացքում, կարդացած բանախոսություններում և տպագրած հոդվածներում մշտապես ընդգծում էր, որ «Պատգամավորությունը հանուն հայերի չի պահանջում ոչ բաժանում, ոչ

---

[9] Փափազյան Վ., Հայկական բարենորոգումները /1912-1914/, «Վէմ», Փարիզ, N 2, 1933, էջ 84:
[10] «Ժամանակ»,Կ.Պոլիս, N1441, 1913:
[11] «Կոչնակ», Նիւ Եորք, N17, 1913:

անկախություն, ոչ քաղաքական ինքնավարություն, այլ միայն Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածով խոստացած բարենորոգումները»[12]:

Պողոս Նուբարը բարենորոգումների վերաբերյալ իր ունեցած հայացքներն ամփոփեց դիվանագիտական աշխարհին ուղղած վեց հուշագրերում, ինչպես նաև կազմեց բարենորոգումների ծրագիր հիմք ունենալով 1895թ. մայիսյան ծրագիրը: Դա պատահական չէր, քանի որ առաջին հերթին նա հաշվի էր առել այն հանգամանքը, որ այդ ծրագրի հիմնական դրույթները համապատասխանում էին արևմտահայերի ներկա պահանջներին: Բացի այդ, այն կազմել էին Կ.Պոլսի ռուսական, ֆրանսիական և անգլիական դեսպանները՝ մյուս տերությունների հավանությամբ և, որ ամենակարևորն է, այն ընդունվել էր Բ.Դռան կողմից:

Պ.Նուբարի կազմած բարենորոգումների ծրագրով հիմնականում նախատեսվում էր Թուրքիայի հայաբնակ վեց վիլայեթներում /Էրզրում, Բիթլիս, Վան, Սվազ, Խարբերդ, Դիարբեքիր/ բարեփոխումների կատարում՝ ֆինանսական, տնտեսական, արդարադատության, ժանդարմերիայի և ոստիկանության բնագավառում, հողային հարցի լուծում, քրիստոնյաների պաշտպանություն քրդերի կամայականություններից, հայերի ազգային և հոգևոր իրավունքների ու արտոնությունների պաշտպանում: Բարենորոգումների գործադրությունը դրվում էր սուլթանի կողմից ընտրված բարձր կոմիսարի, իսկ վերահսկողությունը՝ Բ.Դռան կից տերությունների հավանությամբ կազմված մշտական հանձնաժողովի վրա: Որոշակի բարեփոխություններ էին նախատեսվում նաև Օսմանյան կայսրության այն տարածքներում, որտեղ հայ ազգաբնակչությունը նշանակալի քանակ էր կազմում /Աղանայի վիլայեթ, Զեյթուն/:

Ընդհանուր առմամբ բարենորոգումներ ասելով՝ Պ.Նուբարը հասկանում էր այն վարչական միջոցների ամբողջությունը, որոնք պետք է գործադրվեին եվրոպական հակակշռի տակ՝ արևմտահայությանը տալու համար «ապահովություն՝ ոստիկանական կազմակերպությամբ, արդարություն՝ դատարանների բարեկարգությամբ, աշխատանքի արդյունավորում

---

[12] Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 76:

ֆինանսական օժանդակություններով, բռնագրավված հողերի վերադարձով, հաղորդակցության ճանապարհների շինարարությանբ»[13]:

Պ. Նուբարը, ուսումնասիրելով հայկական հարցի անցյալը, լավ գիտակցում էր, որ «քաղաքակիրթ» Եվրոպան մարդասեր է այնքանով, որքանով դա չի վնասում իր շահերին: Ուստի անհրաժեշտ էր, տերություններին շահագրգռել արևմտահայերի կացության բարելավմամբ: Նրանց ուղղված դիմումները պետք է հիմնվեին ոչ թե մարդասիրական, այլ քաղաքական և տնտեսական պատճառաբանությունների վրա: «Մինչև հիմա,- գրում է Պ.Նուբարը Կ. Պոլսի Պատրիարք Հ. Արշարունուն,- Եվրոպային դիմած էինք իբր թախանձող, կոչում ընելով նրա մարդասիրական զգացմունքներին, որի հետևանքը դժբախտաբար եղած է համակրությունը շահել, այլ ոչ թե ազդու գործակցությունը»[14]: Հենց այդ պատճառով էլ Պ. Նուբարն իր դիմումներում ցույց տվեց, որ հայկական բարենորոգումներն Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման հիմնական ազդակն են, մի բան, ինչում այդ պայմաններում մեծապես շահագրգռված էին բոլոր մեծ տերությունները: «Բարենորոգումները, - գրում էր նա, - ասիական Թուրքիայի համար պիտի լինեն հողային պահպանման պատճառ, առանց բարենորոգումների օտար միջամտություն առաջ պիտի գա իր բոլոր հետևանքներով, որը կարող է երկրի ամբողջությունը վտանգի ենթարկել»[15]: Օտար միջամտություն ասելով՝ Պ.Նուբարն առաջին հերթին նկատի ուներ Ռուսաստանին, որը, պատճառ բռնելով անկարգություններն իր սահմանների մոտ, կարող էր ներխուժել Արևմտյան Հայաստան: Այս մասին Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովը դեսպան Մ. Գիրսին գրած 1912թ. նոյեմբերի 30-ի նամակում նշում էր, որ «անկարգությունների առաջացումը մեր սահմանների հարևանությամբ, այնքանով կդիպչի մեր շահերին, որ դա կարող է ազդել Թուրքիայի հետ մեր նորմալ հարաբերությունների վրա և անցանկալի բախումների պատճառ դառնալ»[16]:

---

[13] Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 63:
[14] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 7:
[15] Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 71:
[16] Реформы в Армении. с.7.

Տեսնելով, որ տերություններն Օսմանյան կայսրությունում ունեն նաև հսկայական տնտեսական և ֆինանսական շահեր /երկաթուղիների կառուցում, փոխառությունների տրամադրում/ Պ.Նուբարն ընդգծում էր, որ այդ շահերի անվտանգությունը ևս կախված է հայկական բարենորոգումների իրականացումից. «Միայն մեր բարենորոգումները կկարողանան կանոնավորել Օսմանյան կայսրության տնտեսական աղբյուրներն ու ամրապնդել նրա ֆինանսական կացությունը՝ վերացնելով անիշխանական կարգերը»[17]:

Պ.Նուբարը հասկանում էր, որ բարենորոգումների իրականացման պահանջներով հանդես գալը բավական չէ հետապնդած նպատակին հասնելու համար: Քաջածանոթ լինելով հայկական հարցի պատմությանը՝ նա գիտեր, որ թուրքական կառավարությունը բազում անգամ պարտավորվել էր իրականացնել բարենորոգումներ, սակայն միշտ դրժել էր իր խոստումը: «Օսմանյան կայսրութեան ամբողջ քաղաքական պատմութիւնը,- գրում էր արևմտահայ ականավոր գործիչ Գ.Զոհրապը,- կամփոփուի քանի մը բառերու մէջ- բարենորոգումներ խոստանալ Քրիստոնեաներուն եւ չգործադրել»[18]: Սրա հիմնական պատճառը՝ Թուրքիայի կողմից բարենորոգումների գործադրման համար իրական երաշխիքի բացակայությունն էր: Իսկ նման երաշխիք կարող էր հանդիսանալ միայն տերությունների վերահսկողությունը /հակակշիռը/: «Փորձը ցոյց տուած է,- գրում էր Պ.Նուբարը,- որ բարենորոգումները, երբ հակակշռով մը չեն պաշտպանուած, ճակատագրականօրէն խոստումի վիճակին մէջ կը մնան և եթէ նոյն իսկ գործադրութեան դրուին, քիչ ատենէն կը ղադրին»[19]: Հենց եվրոպական վերահսկողության պահանջն էլ հանդիսացավ Պ.Նուբարի՝ տերությունների ղեկավար շրջանակներին ուղղած դիմումների անկյունաքարը: Բարենորոգումների պահանջներից հակակշռի կետն էր, որ ամենից շատ հանդիպեց թուրքական իշխանությունների կատաղի ընդդիմությանը, որոնք այն համարում էին անօրինական: Մինչդեռ հայտնի է, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվել էր հայաբնակ

---

[17] Բաբգէն վարդապետ, Հայկական հարցը և Պողոս Նուբար փաշան, Վաղարշապատ, 1914, էջ 30:
[18] Զոհրապ Գ., Հայկական հարցը փաստաթուղթերու լոյսին տակ, Պէյրութ, 1973, էջ 19:
[19] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 13:

նահանգներում բարենորոգումներ կատարել՝ մեծ տերությունների վերահսկողության ներքո: Բացի այդ եվրոպական հակակշռի վերաբերյալ կետ կար նաև 1895 թ. բարենորոգումների մայիսյան ծրագրում, որն ընդունվել էր Բ.Դռան կողմից: Այդ մասին Պ.Նուբարը գրում էր. «Օսմանեան կառավարութիւնը հակակշիռն ընդունելով նոր զիջողութիւն մը չըներ, այլ միայն կատարած կ՚ըլլայ յանձնառութիւն մը զոր իր նախորդներն ընդունած են և որով ինքն ալ կապուած է»[20]:

Դիմելով եվրոպական տերությունների ղեկավար շրջանակներին՝ Պ.Նուբարը միաժամանակ արևմտահայությանը կոչ էր անում՝ հեռու մնալ չմտածված արարքներից, գիտակցելով, որ դրանք կարող են մեծապես վնասել խնդրի լուծմանը. «Պետք է բաձարձակապես զգուշանալ այնպիսի քայլերից,- գրում էր նա,- և մինչև անգամ մտածումներից, որոնք կարող են որևէ կերպ արգելք հանդիսանալ գործին»[21]: Խոսքը վերաբերում էր զինված ապստամբությանն ու ելույթներին: Նա համոզված էր, որ տվյալ պահին ապստամբական շարժումներ արևմտահայությանը կարող էին դնել ծանր կացության մեջ, իսկ եվրոպական տերություններին հարկադրել վերապահումով մոտենալ հայկական հարցի լուծմանը, քանի որ անկարգությունները Թուրքիայի տարածքում կարող էին բերել նրա տարածքային ամբողջականության խախտմանը, որից տերությունները ցանկանում էին խուսափել:

Հայերի զինված ելույթներին դեմ էր նաև Ռուսաստանը: Դրա մասին է խոսում, թերևս, այն փաստը, որ երբ Վորոնցով-Դաշկովի զինվորական օգնական գեներալ Շատիլովի մոտ գալիս է հայկական մի պատգամավորություն և զենք խնդրում, ռուսական կառավարությունը մերժում է և հանձնարարում հայերին՝ «ծայր աստիճան ինքնազսպում և հանդարտություն ցույց տալ»[22]: Բացի այդ, հայերի զինված ապստամբությունն առիթ կտար թուրքերին իրականացնելու հայերի բնաջնջման վաղեմի երազանքները:

---

[20] Օտեան Ե,. նշվ. աշխ., էջ 70:
[21] «Ազգ», Բոստոն, N 35, 1913:
[22] Լեո, Անցյալից (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925, էջ 271:

Պետք է նշել, որ այդ պայմաններում զինված պայքարին դեմ էր նաև արևմտահայության ճնշող մեծամասնությունը: 1912թ. դեկտեմբերի վերջերին Կ. Պոլսում գտնվող Վ. Մալեզյանը, որը պաշտոն ուներ խորհրդակցելու տեղի հայ պաշտոնական անձանց և կուսակցական ներկայացուցիչների հետ ապահովելու համար նրանց համերաշխ գործունեությունը Ազգային Պատվիրակության հետ, Պ. Նուբարին հղած իր տեղեկագրում գրում էր. «Թուրքիոյ մեր բոլոր հայրենակիցները, առանց դավանական, կուսակցական և այլ խտրության հակառակ են զինեալ ապստամբութեան մը՝ ներկա անդոհալից պահին»[23]:

Դիմելով տերությունների աջակցությանը Պ.Նուբարը համոզված էր, որ հայկական հարցի հաջող լուծման համար անհրաժեշտ է նաև, որպեսզի թուրքական իշխանությունները ևս շահագրգռվեն դրանով և զգան բարենորոգումների կարևորությունը: Նա հասկանում էր, որ ինչքան էլ մեծ տերությունները ճնշում գործադրեն Թուրքիայի վրա, միևնույն է բարենորոգումների ընդունումն ու իրականացումը մեծապես պետք է կախված լինի նրա կամքից: Իսկ ճնշման տակ ընդունված բարենորոգումների գործադրությունը, ինչպես դա եղել էր անցյալում, ամեն կերպ կխոչընդոտվեր կառավարության կողմից: «Այս խնդիրը,- գրում էր արևմտահայ հրապարակագիր Տ. Քելեկյանը,- թուրքերուն ալ յօժարութիւնօվը պիտի լուծվի – Ռուսիա չի կրնար ֆերման մը հրատարակել Հայոց համար, ֆերմանը նորէն Թուրքերը պիտի հրատարակեն»[24]: Այս նկատառումով էլ Պողոս Նուբարը ջանք չխնայեց ցույց տալու, որ բարենորոգումներն առաջին հերթին բխում են հենց Թուրքիայի շահերից, որովհետև կհանդիսանան նրա տարածքային ամբողջականության պահպանման միակ միջոցը և կնպաստեն երկրի տնտեսական զարգացմանը: «Թուրքիայի շահը անվիճելիորեն կպահանջի ընդունել բարենորոգումները թե հողային ամբողջությունը պահպանելու, թե խռովության մատնված երկրամասը հանդարտեցնելու և թե տնտեսական լիակատար բարգավաճմանը նպաստելու համար», - գրում էր նա՝

---

[23] Մալէզեան Վ., Ճամբուս ծայրը, հտ. Բ, Փարիզ, 1955, էջ 227:
[24] Տես նույն տեղում, էջ 47:

միաժամանակ ավելացնելով, որ բարենորոգումներից հավասարապես կօգտվի նաև մահմեդական բնակչությունը[25]:

Ընդհանուր առմամբ սրանք էին այն հիմնական դրույթները, որոնք Պողոս Նուբարը, հաշվի առնելով միջազգային դրությունն ու մեծ տերությունների դիրքը, առաջ քաշեց եվրոպական մայրաքաղաքներում: Դրանք, թվում է, նվազագույն և ամենաանհրաժեշտ այն պահանջներն էին, որոնց իրագործումը հնարավոր էր ծեռք բերել այդ ժամանակաշրջանում: «Ինչ որ Կաթողիկոսի Պատվիրակությունը պահանջեց,- գրում էր «Կոչնակ» թերթը,- մեզ համար անխուսափելի էր: Հաջող թե անհաջող անիկա ներկա պարագաներու տակ միակ բանն էր, որ կրնայինք պահանջել»[26]:

Հայկական հարցի լուծման շուրջ մեծ տերությունների միջև ծագած թեժ պայքարն ի վերջո ավարտվեց 1914թ. հունվարի 26-ի հայկական վիլայեթներում բարենորոգումների իրականացման վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրով: Թուրքահայոց խնդրի նման լուծման մեջ իր որոշակի ավանդն ունեցավ նաև Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան, որը մոտ 1,5 տարի «մեծ ծեռնհասութեամբ, զոհողություններով և կամքի ու մտքի հազվագյուտ ծիրքերով վարեց իրեն հանձնված այնքան բարդ ու փափուկ պաշտոնը»[27] և հաջողեց արևմտահայերի պահանջներին ի նպաստ դարձնելու մեծ տերությունների և հատկապես Գերմանիայի վերաբերմունքը:

Սակայն այդ չնչին ծեռք բերվածին էլ վիճակված չէր իրականանալու: Երիտթուրքերը, օգտվելով առաջին աշխարհամարտի ընձեռած հնարավորությունից, ոչ միայն չեղյալ հայտարարեցին վերոհիշյալ համաձայնագիրը, այլև իրականացրեցին արևմտահայության ցեղասպանությունը:

---

[25] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 12:
[26] «Կոչնակ»,-Նիւ Եորք, N 41, 1913:
[27] «Ազգ», Բոսթոն, N 37, 1914: